Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման հայտարարություն

2023 թվականի ապրիլի 3-ին՝ ժամը 11^{30} ,ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանում՝ Վ.Սարգսյան փողոց, թիվ 94 հասցեում, կայանալու է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարում՝ բաց դասական աճուրդի միջոցով:

Աճուրդի են դրվում հետևյալ լոտերը՝

Լոտ 1 - Տաշիր համայնք, ք.Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 377/4 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 3965.6քմ (ծածկագիր՝ 06-008-0277-0050) այլ հողամասը 3140800 (երեք միլիոն հարյուն քառասուն հազար ութ հարյուր) ՀՀ դրամ մեկնարկային գնով:

Լոտ 2 - Տաշիր համայնք, ք.Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 377/5 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 2802.6քմ (ծածկագիր՝ 06-008-0277-0047) այլ հողամասը 2219700 (երկու միլիոն երկու հարյուր տասնինը հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ մեկնարկային գնով:

Հողամասերիի նկատմամբ սահմանափակումներ չկան, նրանց օգտագործումը սերվիտուտ չի առաջացնում, հարում են հաղորդակցության ուղիներին:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել.

ա) հայտ,

բ) աճուրդին մասնակցության համար սահմանված դրամի չափով վճարի անդորրագիր,

գ) անձնագիր, իրավաբանական անձանց համար հիմնադիր փաստաթղթերը:

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է սույն թվականի մարտի 29 -ը: Վաճառվելիք լոտերին մասնակիցն"ը կարող են ծանոթանալ մինչև աճուրդի բացման նախորդող օրը՝ յուրաքանչյուր երեքշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 10:00-17:00 ընկած ժամանակահատվածում (բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածի): Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը համարվում է աճուրդում հաղթած մասնակից:

Նախավճարի չափը մեկնարկային գնի 50 % չափով, աճուրդի մասնակցության վճարը՝ 2000 դրամ:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Տաշիրի համայնքապետարան (0254) 2-29-31, 2-34-06 հեռախոսահամարներով: